ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակին և իր գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի, Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Էդվարդ Նալբանդյանի և Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Կյունիի ուղեկցությամբ:

Ողջունելով Ֆրանսիայի նախագահին հայոց հավատի նվիրական հոգևոր կենտրոն Սուրբ Էջմիածնում՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Հայաստանի Հանրապետության 15-րդ տարեդարձը նշանավորվեց հայ ժողովրդի համար բարեկամ երկրի նախագահի այցով, ինչպես նաև Ֆրանսիայում Հայաստանի տարվա միջոցառումներով:

«*Այս այցելությունը գեղեցիկ մի վկայություն է մեր ժողովուրդների դարավոր բարեկամության: Եվ նվիրական այս սրբավայրում մենք ցանկանում ենք հանուն մեր ժողովրդի և Եկեղեցու շնորհակալություն հայտնել Ձեզ և ի դեմս Ձեզ՝ Ֆրանսիայի մարդասեր, իրավասեր ժողովրդին այն ողջ աջակցության և զորակցության համար, որ դրսևորվել է մեր ազգի և Հայրենիքի նկատմամբ: Առանձնակի երախտագիտությամբ ենք հիշում, որ Ֆրանսիան հյուրընկալեց մեր ժողովրդի տարագիր զավակներին, ովքեր վերապրեցին Ցեղասպանության ահավոր ողբերգությունը, և այսօր Ֆրանսիայի իշխանությունների հոգատար և բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ կազմակերպել են իրենց հոգևոր-ազգային կյանքը*»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով Ֆրանսիայի իշխանություններին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար, որը ոչ միայն արդարության վերականգնում էր հայ ժողովրդի հանդեպ, այլև ողջ մարդկության առջև: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ այն աջակցությանը, որ Ֆրանսիան մասնավորաբար ցուցաբերել է Հայաստանի նկատմամբ անկախության օրերից ի վեր կյանքի բոլոր ոլորտներում:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետը Ժակ Շիրակին նաև ծանուցեց, որ առաջիկային որոշակի փոփոխություն է արձանագրվելու Ֆրանսիայի համայնքային կյանքում, որով Ֆրանսիայում հռչակվելու է մեկ թեմ, ինչին տասնյակ տարիներ ձգտում էր Հայոց Եկեղեցին և հայ համայնքը:

Իր հերթին Ֆրանսիայի նախագահը, ուրախություն հայտնելով Հայ Եկեղեցու կենտրոն այցի առիթով, իր զգացվածությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջերմ ընդունելության համար՝ իր հարգանքը հայտնելով Հայ Եկեղեցուն և Հայոց Հովվապետին: «Շատ ուրախ ենք Ֆրանսիայում թեմ ստեղծելու Ձեր որոշման համար: Լավ գիտեք, որ ծագումով հայ շատ ֆրանսիացիներ կան մեր երկրում պատմա-

կան տարբեր հանգամանքների բերումով»,- նշեց նախագահը: Ժակ Շիրակն անդրադարձավ նաև երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը, որը ձևավորվել է պատմության թե' ուրախալի, թե' ողբերգական ժամանակահատվածներում: Մասնավորապես խոսելով Ցեղասպանության մասին՝ Ֆրանսիայի նախագահը ասաց. «Բնական էր, որ Ֆրանսիան առաջին երկրներից մեկը լիներ՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը օրենքի միջոցով: ...Հույս ունեմ, որ նման ոճիրները դատապարտելով՝ դրանք ապագային նորից չեն կրկնվի»:

Նախագահը գոհունակությամբ խոսեց երկու պետությունների միջև առկա տնտեսական և քաղաքական գործակցության և հարաբերությունների մասին՝ նշելով, որ ուրախ է Հայաստանի տնտեսական ու սոցիալական զարգացման համար և վստահություն հայտնեց, որ Ֆրանսիան պիտի իր մասնակցությունը բերի այս հարցում: Նախագահ Շիրակը խոսեց նաև մշակութային կապերի սերտացման մասին՝ շեշտելով և Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում կազմակերպվող շուրջ 500 միջոցառումների կարևորությունը:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Նորին Սրբությունը կարևորեց Ֆրանսիայի և նրա նախագահի դերը խնդրի խաղաղ կարգավորման գործընթացում՝ նշելով, որ շարունակելու է ըստ ամենայնի ջանքեր գործադրել, որպեսզի բոլոր նմանօրինակ խնդիրները և, ի մասնավորի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, խաղաղ լուծման առաջնորդվեն Տիրոջ զորակցությամբ և ողորմությամբ: Իր հերթին նախագահ Շիրակը հաստատեց, որ Ֆրանսիան փորձում է Մինսկի խմբի շրջանակներում իր աջակցությունը բերել խնդրի լուծմանը: «Պետք է կամենալ, ցանկանալ և հավատալ խաղաղությանը»,- նշեց նախագահ Շիրակը:

Ֆրանսիայի Հանրապետության նախագահին մաղթելով քաջառողջ արևշատություն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը աղոթք բարձրացրեց՝ հայցելով, որ Տերը օրհնի և զորացնի բարեկամական կապերը երկու ժողովուրդների, աշխարհը պահի խաղաղության մեջ և ազգերին ու պետություններին պարգևի համագործակցություն, ժողովուրդներին՝ բարօր կյանք:

Հանդիպման ավարտին Ֆրանսիայի նախագահը գրառում կատարեց Վեհարանի հուշամատյանում, ապա Վեհափառ Հայրապետն ու բարձրաստիճան հյուրն այցելեցին Մայր Տաճար, եղան Տաճարի թանգարանում:

Հանդիպմանը ներկա էին Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, Սուրբ Էջմիածնի միաբաններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ
ԳՐԱՌՈՒՄ Է ԿԱՏԱՐՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎՈ ՄԱՏՅԱՆՈՒՄ

Ulsen Sustucut
Ulsen Sustucut